ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 51-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Ռուբեն Վարդազարյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2024 թվականի հուլիսի 15-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Ռուբեն Վարդազարյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«1. Սույն անհատական դիմումն ընդունել վարույթ,

2. Հայաստանի Հանրապետության «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը, հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 49-րդ հոդվածին (ի համակցում 61-րդ, 63-րդ և 164-րդ հոդվածին) հակասող ու անվավեր»:

2. Ներկայացնելով թիվ ԵԴ/0310/11/21 գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ Սահմանադրության 49, 61, 63-րդ հոդվածների և 164-րդ հոդվածի 4-րդ մասի համակարգային վերլուծությունից բխում է, որ եթե Բարձրագույն դատական խորհուրդը քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ չի տվել իր համաձայնությունը, ապա դրա հարուցումն ինքնին հակասահմանադրական է և ոչ

իրավաչափ, որի պարագայում անհապաղ պետք է վերացվի քրեական հետապնդում հարուցելու համապատասխան որոշումը:

Դիմողը գտնում է, որ Սահմանադրության 164-րդ հոդվածի 4-րդ մասում, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած «իր լիազորությունների իրականացման կապակցությամբ» արտահայտությունը թիվ ԵԴ/0310/11/21 գործի շրջանակներում ՀՀ դատարանների կողմից մեկնաբանվել է նեղ իմաստով, որով վիճարկվող իրավակարգավորմանը հաղորդվել է հակասահմանադրական բովանդակություն: Ընդ որում, Դիմողի պնդմամբ, «նեղ իմաստով» ասելիս ինքը նկատի ունի զուտ տառացի մեկնաբանությունը, որի պարագայում իմաստազրկվում է դատավորի գործառութային անձեռնմխելիությունը: Հավելելով՝ Դիմողը նշում է, որ վերոգրյալ գործի շրջանակներում ՀՀ դատարանները, մեկնաբանելով վիճարկվող դրույթը և կիրառելով այն իր նկատմամբ, եզրահանգել են, որ ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա քրեական հետապնդում հարուցելու պարագայում դատավորը չի օգտվում Սահմանադրության 164-րդ հոդվածի 4-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված գործառութային անձեռնմխելիությունից, քանի որ դատավորի լիազորությունների մեջ չի մտնում պաշտոնեական դիրքի օգտագործմամբ արդարադատության իրականացմանը խոչընդոտելը:

Դիմողը պնդում է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում հաղորդվել է հակասահմանադրական բովանդակություն, և տվյալ նորմի՝ ՀՀ դատարանների կողմից իր նկատմամբ հակասահմանադրական բովանդակությամբ կիրառվելու արդյունքում խախտվել է իր՝ Սահմանադրության 49-րդ հոդվածով երաշխավորված հանրային ծառայության անցնելու իրավունքը (որն իր մեջ ներառում է իր ստանձնած պաշտոնում առանց խոչընդոտների պաշտոնավարելու իրավունքը)՝ ի համակցումն Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ համապատասխանաբար դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների:

Եզրափակելով՝ Դիմողն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ քրեական հետապնդում հարուցելու պարագայում չի հաղթահարվել դատավորի՝ Սահմանադրության 164-րդ հոդվածի 4-րդ մասով երաշխավորված գործառութային անձեռնմխելիությունը, քրեական հետապնդում հարուցելն ինքնին խախտում է իր՝ Սահմանադրության 49-րդ հոդվածով, ինչպես նաև ի համակցումն այդ իրավունքի՝ 61 և 63-րդ հոդվածներով և 164-րդ հոդվածի 4-րդ մասով երաշխավորված՝ դատավորի գործառութային անձեռնմխելիության իրավունքները:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,* ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված* ***այլ դեպքերում****:*

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ* ***անհատական դիմումն ակնհայտ անհիմն է****:*

Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրվել է, որ *«(…) անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում,* ***երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:***

(…) անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, ***դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:***

Սահմանադրական դատարանը վերը նշված՝ ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է, որ *«(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե* ***իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…)»:***

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ *եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դիմումն* ***ակնհայտ անհիմն է:***

Այս առումով Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման միջև, **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական**

իրավունքի և (կամ) ազատության՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթի և իր համապատասխան հիմնական իրավունքի և (կամ) ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ:

Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 12-ի ՍԴԱՈ-126 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ *«(...) անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և հիմնավորի վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության անմիջական պատճառահետևանքային կապը: Այլ կերպ ասած՝* ***վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման:*** *Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ* ***Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրաիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրաիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման»:***

Վերը ներկայացված դրույթներով ամրագրված կարգավորումները և Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանը հանգում է հետևյալ եզրակացության.

անհատական դիմումի շրջանակում նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում **անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթը (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը) հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման, ինչը սույն պարագայում տեղի չի ունեցել:**

Մասնավորապես՝ Դիմողը վկայակոչել է վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) հակասությունը Սահմանադրության 49, 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ համապատասխանաբար հանրային ծառայության անցնելու, դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքներին, սակայն **բավարար կերպով իրավաբանորեն չի հիմնավորել իր՝ Սահմանադրության 49, 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի խախտման փաստը, հետևաբար նաև՝ վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) և համապատասխան հիմնական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը:**

Անդրադառնալով Դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 164-րդ հոդվածին՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ **ինչպես պաշտոնաթող, այնպես էլ ներկայում պաշտոնավարող դատավորները Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումի շրջանակում հանդես են գալիս որպես ֆիզիկական անձ, հետևաբար՝ կաշկանդված են Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված՝ իրենց որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության ենթադրյալ խախտման հարց բարձրացնելու պահանջով: Ուստի՝ անհատական դիմումի շրջանակում չի կարող բարձրացվել և քննարկման առարկա դառնալ Սահմանադրության 164-րդ հոդվածով սահմանված՝ դատավորի կարգավիճակին, այդ թվում՝ անձեռնմխելիությանը վերաբերող հարց:**

Քննարկվող համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն անհատական դիմումի շրջանակներում Դիմողի կողմից **չի բարձրացվել այնպիսի հարց, որն առնչվում է վերջինիս՝ Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքին և (կամ) ազատությանը:**

Այսպիսով, Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ սույն դիմումով չի հիմնավորվում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) հակասությունը Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքին:

Այսինքն՝ **սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, որը գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից մերժելու հիմք է:** Ուստի՝ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ **դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Ռուբեն Վարդազարյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

3 սեպտեմբերի 2024 թվականի
ՍԴԱՈ-140